

Մա BankID է

BankID-ն էլեկտրոնային նույնականացման ձև է, որը ընկերություններին, բանկերին, կազմակերպություններին և գործակալություններին թույլ է տալիս համացանցի միջոցով նույնականացնել մասնավոր անձանց և համաձայնագրեր կնքել նրանց հետ: BankID-ն էլեկտրոնային ID (նույնականացման) փաստաթուղթ է, ինչպես անձնագիրը, վարորդական իրավունքը կամ ինքնությունը հաստատող այլ ֆիզիկական փաստաթուղթ:

Այս էլ. նույնականացումը տրվում է բանկերի կողմից

Ցանկացած մասնավոր անձ, ով ունի շվեդական անձնական ID համար, կարող է իր բանկի միջոցով ձեռք բերել BankID: BankID-ն ունի նույն արժեքը և օգտագործվում է միևնույն կերպ՝ անկախ նրանից, թե որ բանկն է այն տրամադրել:

BankID-ն լայնորեն կիրառվում է

Մասնավոր անձանց BankID-ներ տրամադրող բանկերի թվում են՝ Danske Bank-ը, ICA Banken-ը, Ikano Bank-ը, Handelsbanken-ը, Länsförsäkringar Bank-ը, Nordea-ն, SEB-ը, Skandiabanken-ը, Sparbanken Syd-ը, Swedbank-ը և Ålandsbanken-ը: Ընդհանուր առմամբ, այդ բանկերն ունեն 8 միլիոն ինտերնետային բանկային հաճախորդներ, ովքեր կարող են օգտագործել BankID-ն ինտերնետային և բջջային բանկային գործառնություններում, ինչպես նաև պետական մարմինների, համայնքապետարանների և մասնավոր ընկերությունների հետ գործարքներում: Ըստ գնահատումների՝ 2017թ.-ին BankID-ն կօգտագործվի մոտ 2,5 միլիարդ անգամ:

Ներկայումս էլեկտրոնային նույնականացում օգտագործող անձանց մեծամասնությունն ընտրել է BankID-ն:

Էլ. նույնականացում տրամադրող այլ ընկերությունների թվին է պատկանում, օրինակ, Telia-ն: